

ԵՊՀ ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնի խորհուրդ

30.06.2016թ. նիստի

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N9

Ներկա էին՝

Խորհրդի 18 անդամներից 10-ը:

Հսեցին՝

1. Ս. Շուքուրյանի կողմից ներկայացված ընթացիկ նախագծերի և ծրագրերի վիճակի ակնարկը:

Հսեցին՝

2. Ա. Կոստանյանի կողմից ներկայացված “Խնդիրների լուծում Prolog լեզվով” ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրման հարցը:

Արտահայտվեցին՝

Ակադեմիկոս, ֆ.մ.գ.դ. Ս. Շուքուրյանը, դոցենտ, ֆ.մ.գ.թ. Մ. Մանուկյանը:

Ս. Շուքուրյանը նշեց ձեռնարկում ներկայացված նյութի արդիականությունն ու հնարավոր կիրառությունները, մասնավորապես, բժշկության ոլորտում տեղեկատվական համակարգերի ստեղծման բնագավառում:

Մեթոդական խորհրդի նախագահ *Մ. Մանուկյանը* ընդգծելով իր ունեցած փորձառությունը ձեռնարկում ներկայացված նյութի վերաբերյալ նշեց ձեռնարկի պահանջվածությունն ու ներկայացված նյութի մատչելիությունը:

Մ. Մանուկյանը ներկայացրեց մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը ձեռնարկի տպագրման վերաբերյալ:

Որոշեցին՝

Դիմել ԵՊՀ Գիտական Խորհրդին Ա. Կոստանյանի կողմից ներկայացված “Խնդիրների լուծում Prolog լեզվով” ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրումը թույլատրելու առաջարկով:

Հսեցին՝

3. Գ. Հարությունյանի կողմից ներկայացված “Ներկառուցված լուծումներ նանոչափական հիշող սարքերի թեստային հիմնախնդիրների համար և դրանց իրականացումը ներդրված ծրագրային համակարգի միջոցով” թեմայով գիտական զեկույցը:

Խորհրդի նախագահ՝

Ս.Կ. Շուքուրյան

Խորհրդի քարտուղար՝

Գ.Է. Հարությունյան